ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆԻ «ՄՀԵՐԻ ԴՌԱՆ ԳԻՐՔԸ» ՎԵՊՈՒՄ

Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԲՖ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ

Ակնհայտ է, որ Լևոն Խեչոյանը վեպը գրելիս հարցերը հարաբերել է մեծ ժամանակին: Քրիստոսից առաջ տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները, Քրիստոսի հարության, նրա գալստյան մասին հիշատակումները Խեչոյանի համար սովորական են այն իմաստով, որ Քրիստոսից առաջ արդեն հայերն իրենց ապրումների քուրայում ու մտքի պահեստարաններում բացահայտել էին Մհերյան աստվածությունը, որ տարբերվում էր այն պարզունակ ընկալումներից, ինչը սովորական էր նոր ժամանակների մարդու համար: Գրողը հարցի դրվածքը ներկայացրել է երկու հիմնական ուղղվածությամբ: Մի դեպքում խոսքը հերոսի փիլիսոփայությանն է վերաբերում: Այս դեպքում հեղինակը հաղթահարում է ժամանակները՝ Մհերը ձգվում է անժամանակ ժամանակի մեջ՝ հարյուրամյանկների միջով, որպես համաժամանակյա գոյություն, հասնում է մինչև մեր օրերը և շարունակելու է իր գոյությունը ժողովրդի հետ: Այստեղ սահմանափակումներ պարզապես չկան, ինչքան խաորհրդավոր ու անքննելի են նրա սկիզբը՝ որքան երկրագունդը, նույնքան անքննելի են նրա ապրելու կերպը ապագայի մեջ: Իհարկե, այս պարագայում Խեչոյանը հնարավորություն է ունեցել հերոսի մասին խոսելիս հնարավոր բացահայտումներ անել, խոսել այնպիսի հարցերի մասին, որոնք հուզում են հանուր մարդկությանը: Նման դեպքերում նրա համար կարևորվում է մարդը և ոչ թե ազգային գենի կրողը: Միամտություն է կարծել, թե համամարդկային խնդիրներ առաջ քաշող, դրանք դարերով սերունդներին փոխանցող երևույթը՝ տվյալ դեպքում Մհերը, ազգային գենի կրող կարող էր և չլինել: Ճշմարիտ ազգայինը չի կարող համամարդկային չլինել: Եթե Մհերը խոսել է իր տեսակի մասին, նրան պաշտպանելու մասին, չէր կարող իր կեցվածքով, վարքով, գործողություններով չնպաստել համընդհանուր արժեքներին: Այս ոլորտում գրողը կարողացել է հնարավորինս ընդլայնել կերպարի փիլիսոփայական շերտը:

Բայց, իհարկե, պատումի այն ներքին փիլիսոփայությունը, որ ընտրել է գրողը, կմնար թերի, եթե այս ամենը նա չհաղորդակցեր ներկային: Մհերը կենդանի է ներկայում ապրող մարդկանց միջոցով: Այստեղից էլ կերպարի ծավալման մի նոր շերտ, որն ավելի սոցիալական բնույթ ունի: Այստեղ արդեն չի կարելի չնկատել ինչպես խորհրդային ժամանակների բռնապետության արձագանքները, այնպես էլ այդ երկրի

փլուզումից հետո առաջացած նոր հանգամանքները, որտեղ շարունակվում են նախորդ ժամանակաշրջանին բնորոշ երևույթները: Այստեղ ակնհայտորեն հակադրության մեջ են իշխանություններն ու հասարակ ժողովուրդը: Այն համընդհանուր զարթոնքը, որ ապրում են մարդիկ, գյուղերից ու ավաններից հորդահոս գետի նման լցվելով Սասուն, առաջին հերթին կապված է Մհերի կանչի, նրա կենդանի գոյության հետ: Որքան էլ իշխանությունները համոզեն, թե Մհերը չկա, նրա ձիու վրնջյունը ոչ ոք էլ չի լսել և այլն, միևնույն է, նրանց հավատացողների թիվն այնքան քիչ էր, որ այդ տեղեկություններին լուրջ չէին վերաբերվում: Այս ամենի նպատակն այն էր, որ մեկ անգամ ևս պարզվեր, որ Մհերը կենդանի էր:

Իհարկե, կերպարը որոշակի սխեմայի ենթարկելն անշնորհակալ գործ է, քանի որ այն նաև ունի այնպիսի ծալքեր, որոնք բնութագրման պարագայում կարող են դուրս մնալ: Այսուհադերձ, գրողական ներքին հայացքի ուղղությունը մեզ տանում է այնպիսի ուղիներով, որտեղ մեր գրականությունը, մենք պիտի լինենք:

Մհերը տարբերվում է Սասնո տան մյուս հերոսներից: Նա ներքին հակասական շատ բաներ ունի իր մեջ: Իր գործելակերպով, իր նկարագրով, իր ապրելու փիլիսոփայությամբ տարբերվում է մնացածներից: Մեծն Մաթևոսյանն ասում է, որ Դավիթը ասում է, Մհերը լինում է: Նա այնպիսին է, ինչպիսին որ կա, ինչպիսին որ թվում է մեզ: Վեպում արդեն նրա շրջապտույտ ճամփորդությունները, մարդկանցից խուսափումները վկայում են մի բանի մասին՝ Մհերն այնպիսին չէ, ինչպիսին իր շրջապատի մարդիկ են: Դա առանձնապես երևում է Սասունի վերնախավի և Մհերի փոխհարաբերության դիտարկումների համատեքստում: Նրան մեղադրում են մնացածներին նման չլինելու մեջ: Այս ժամանակը, որ առավելապես ասոցացվում է խորհրդային ժամանակներին, առանձնանում է մարդկային անհատականության կորստով: Երևույթն իրականում խորն արմատներ ունի:

Ռուսաստանում ճորտատիրությունը վերացվեց միայն 1861-ին: Մարդկային անհատականության մասին խոսելն ավելորդ էր, 1917-ին հաստատվեց գաղափարական նոր բռնապետություն: Խորհրդային երկրի տարածքում ընդգրկված ժողովուրդները համայնքային կենսաձևերի, կոլեկտիվ մտածողության կրողներն էին: Ազատությունը բնականաբար չէր դարձել կենսաձև: Ազատությունն ավելի շուտ հոգեբանական վիճակ է, քան իրավական ակտ: Ազատությունը հոգու վիճակ է, ոչ թե բնազդների դրսևորում: Այստեղից էլ այն հիմնական տարբերությունը, որին Արևելքը տարբերում էր Արևմուտքից: Խոսքը անհատականության մասին է: Անհատականությունը ձևավորվում է ազատության պայմաններում: Խեչոյանի վեպի ներքին միտումը մարդկային անհատականությունը Մհերի միջոցով վերագտնելն է: Կանչվածի խորհուրդը մեծ է այն

իմաստով, որ բոլոր ժամանակների խորքում անհատականության բաղադրիչը մշտապես գնալով ավելի ու ավելի մեծ է ու գերակշռող նշանակություն է ունենալու: Միերի պարագան դառնում է մեծ ու անկորնչելի այն իմաստով, որ երկար ժամանակի մեջ ժողովրդի ամբարած հոգևոր մշակույթը, տարբեր ժամանակների՝ տարբեր գոյության կերպերի սահմանագծին կանգնած անհատը, որ խոսում է հազարամյակների հետ, իր մշտառկա ներկայությամբ արթնության է կոչում է բոլոր նրանց, ովքեր ժամանակի հոլովույթում կորցրել են իրենց գոյության իմաստը՝ միախառնվելով համընդհանուր քաոսի երթին: Հարկ է ինքնաճանաչման ուղիով Միերին արթնացնել հազարամյակների հետ խոսող էության անդնդախոր ծալքերի մեջ՝ վերագտնելով սեփական արժանապատվության ջահը, որ մարդուն դուրս կբերի երկհազարամյա խլության բանտից՝ մեր մեջ հարուցելով արժանապատիվ գոյության երթին մասնակից լինելու հրամայականը:

Այնուհանդերձ, Միերը՝ որպես մշակութային երևույթ, չի սպառվում վերոհիշյալ մեկնաբանությամբ: Խեչոյանի վեպում այն որոշակիորեն սոցիալական ուղղվածություն ունի, դա անհրաժեշտ է գրողի համար, որպեսզի շատ հարցեր հաղորդակցի նոր ժամանակներին: Այս իմաստով, ինչպես նկատել է գրականագետ Սաթենիկ Ավետիսյանը, Միերը շատ կողմերով մոտենում է Չարենցի մեկնաբանությանը: Միերի և միջավայրի հակասությունը, որ գրեթե դառնում է անհաղթահարելի, ինչ որ կերպ հարկ է, որ լուծում ստանա: Լուծումն էլ ստանում ենք: Դարեր գնացող ժամանակի մեջ Չարենցն արձանագրում է Ձենով Օհանի՝ քիչ է ասել ոչ հայրենասիրական քայլը և Սասնա հերոսների՝ իրենց ժողովրդին, երկրի հանդեպ ունեցած նվիրվածությունը: Ձենով Օհանը հնարավորինս կասեցնում է Սասնա հերոսների մեջ եղած հերոսական ոգին, որը նրանց դուրս կբերեր ստրկական վիճակից և հնարավորություն կտար ապրել արժանապատիվ կյանքով:

Հարցի այս դրվածքը լավագույնս արտահայտված է վեպում: Վերևների ու ներքևների միջև եղած հակադրությունը կապված է իշխանական դասի այն հետևողական մղումների հետ, որով ամեն կերպ փորձում են արդարացնել Միերի վաղուց մեռած լինելը, որպեսզի նրա ոգին հանկարծ ու հանկարծ չհառնի մարդկանց ներաշխարհում: Եվ կամ էլ այն պատմությունների մեջ, որտեղ խոսվում է այն մասին, թե ինչպես Ոստանակապանում նրան աշխատեցրել են մինչև խոր ծերություն, թափվել են նրա ատմաները և ի վերջո՝ որպես սովորական մահկանացու, վախճանվել է: Այս լուրերը տարածում էին իշխանությունները, որպեսզի մարդիկ վերջնականապես կտրեին իրենց հույսը Ագռավաքարում փակված անմահ ու անժառանգ Միերից:

Խեչոյանը բնականաբար չի սահմանափակվել կերպարի մեկնաբանման այս տեսանկյունով: Նրան անհանգստացրել են և այլ կարգի երևույթներ, որոնք հարաբերակցվում են առասպելական հերոսի որակներին, որոնք գալիս են դարերի խորքից:

Մենք սովորաբար մեր էպոսն առնչում ենք 9-10-րդ դարերի իրողությունների հետ, բայց իրականում հայ ժողովրդի հիշողությունը պահել է հազարամյակների խորքը գնացող երևույթները: Եթե սահմանափակվենք վերոհիշյալ հարյուրամյակների շրջագծում, ապա հնարավորություն չենք ունենա հնարվորինս ամբողջությամբ մեկնաբանելի դարձնել էպոսի փիլիսոփայական խորքը: Արաբական տիրապետության շրջանն ուղղակի առանձին էպիզոդ է էպոսի անծայրածիր տարածքում: Այստեղ այնքան ընդգրկուն են ժամանակների սահմանները, որ անհրաժեշտություն է առաջանում խոսել անգամ ժամանակային տարբեր համակարգերի մասին: Ագռավաքար մտած և այնտեղից կրակ բերող աղջիկը տուն է հասնում մեկ տարի անց, մինչդեռ Ագռավաքարում նա կրակն է վերցրել և դուրս եկել: Ժամանակների նման ընկալումը, որ ունեցել է ժողովուրդը, երբեք իր հիշողությունը, միտքը չէր պարագծի նեղ՝ մեկ-երկու դարերով: Իհարկե, խնդիրը տվյալ դեպքում կապված է Միերի, հետևաբար և հայ ժողովրդի ողբերգության հետ. Միերը գրեթե բռնությամբ հեռացվել է պատմության ընթացքից, նրա համար ժամանակը կանգ է առած, նրան պետք է դուրս բերել Ագռավաքարից տիեզերական բնական ժամանակի մեջ, այդ պատճառով էլ նրա մոտ գնացած աղջիկը կրակը վերցնում և հետ է գալիս, որը մեզ համար տարվա տևողություն ունի:

Խեչոյանի վեպում քիչ չէ և առեղծվածայինը: Դա նրա, կարելի է ասել, գրականության բնորոշ որակներից մեկն է: Նրան մշտապես հուզել է անբացատրելին, այնկողմնայինը, իրողությունների շրջված երեսը, որ նրա խոսքին ոչ այնքան խորհրդավորություն, որքան խորք է տալիս: Պատահական չէ, որ հաճախ ընդգծված կարգով նա մեկնաբանությունների մեջ գնում է պրագմատիկ վերլուծությունների, քննում է, ասենք, Դավթի հանկարծակի հեռանալը մի դեպքում Չմշկիկից, մյուս դեպքում՝ Խանդութից: Դրանք առանձին դեպքերում կարող են թեև տրամաբանական թվալ, բայց նման մոտեցումը նեղացնում է երևույթի իմաստը: Պարզապես ցանկանում ենք ասել, որ գրողը շատ բան ցանկանում է տեսնել զուտ իրողությունների շրջագծում: Դա այնքան էլ իրատեսական չէ էպոսի պարագայում: Բայց այս մոտեցումն ընդհանուր վեպի առումով գերակշռող հանգամանք չէ, հակառակ դեպքում Խեչոյանը չէր խոսի այնպիսի երևույթների մասին, որոնք սովորական կեցության ձևերից վեր են: Այս սֆերայում արդեն նրա հերոսը դառնում է այլ ժամանակների, ավելի որոշակի՝ տիեզերական ժամանակի կրողը և

այստեղ խոսել այն մասին, թե որ քաղաքից ուր է գնացել, անընդհատ քայլել է շրջանաձև և այլն, պարզապես քիչ բան կարող է ավելացնել այս տիեզերական ճամփորդի նկարագրին: Խեչոյանի հերոսը դառնում է մեծ, տիեզերական ժամանակի մի մեծ շրջափուլի ավարտի ու նոր շրջափուլի սկիզբն ազդարարող առասպելական հերոս: Ընդհանուր առմամբ Միերը դառնում է նյութի աշխարհի ավարտն ազդարարող աստված, ով Թուր Կեծակին մի կողմ է դրել և հայտնվել է տարբեր՝ այսկողմնային և այնկողմնային աշխարհների սահմանագծին, որ հաղորդակցվում է այնկողմնային ուժերին, նա կարող է հատել սահմանը՝ Խուտուրինի օգնությամբ՝ տարբեր աշխարհների սահմանագիծը հաղթահարող առասպելական թռչունի պես, որ հանդես է գալիս ամենատարբեր կերպարանքներով: Դա նաև Խաչ Պատարագին է, որ իջնում է Սասնա Տան հերոսների թևին:

«Փոքր Միեր վերջին դիցը, ի տարբերություն նյութական տիեզերքն արարող իր նախորդ աստվածությունների, փակում է փուլը»/Արմին, 432/: Այս հերոսի ձեռնարկումները վկայում են այն մասին, որ Միերը հետևողականորեն մերժում է նյութական աշխարհի կարգը: Նրա հետևողական մաքառումներն ուղղված են անարդար աշխարհը կործանելու մտադրության հետ: Եվ այս ճանապարհին նրա համար որևէ նշանակություն չունի՝ նրա զոհերը իրեն հարազատ մարդիկ են, թե ոչ: Միերը նախ նետահար անելով սպանում է հորեղբոր որդուն՝ Աստղ Ցոլածնին, ապա առանձին պատումներում սպանում է և քեռիներին: Սպանված հոր վրեժը լուծելու համար վերացնում է Խլաթը, անգամ վերջին պառավին ու սև կատվին: Իսկ մինչև Ագռավաքար մտնելը կռվում է Աստծո յոթ հրեշտակների դեմ, ովքեր չեն կարողանում Միերին հաղթել: Վերջինիս թուրը զարկի ուժից անցնում է անդրաշխարհ ու հասնում սև ջրին: Եթե հրեշտակը թևը դեմ չտար, ապա աշխարհը կկործանվեր: Իսկապես, ինչպես նկատում է Արմինը, Փոքր Միերը մինչև Ագռավաքար մտնելն արդեն կանխագծում է այն ամենը, որոնք որ նա պիտի իրականացնի Ագռավաքարից դուրս գալուց հետո: Այդ պարագայում Փոքր Միերը փակում է տիեզերաձավալման հին փուլը և բացում նորը, որ նախորդի կրկնությունը չէ: Գերեզմանից հայրը՝ Դավիթը, որդուն պատգամում է գնալ Ագռավաքար. «Քո տեղ էն տեղն ի, չուր անծին ծնանի, անմախ մեռանի»/Ս. Ծ. Հատոր Ա, մաս 1, էջ 377/: Ստացվում է, որ իր նպատակի իրագործումից հետո Միերը մեռնելու է՝ հավիտյան հանգստության կոչվելով, քանի որ միայն նա է էպոսի անմահ ու անժառանգ հերոսը:

Անկասկած է Միերի և Քրիստոսի միջև եղած ընդհանրությունը: Փոքր Միերը, Արտավազդը, հնդկական Շիվան, Քրիստոսը /երկրորդ

գալուստով/ տիեզերական շրջափուլի ավարտումով նյութական աշխարհը կործանող աստվածություններ են /Արմին, 134/:

Խեչոյանին հետաքրքրել է Միերի բնույթի փիլիսոփայական կողմը, որը մեր գրականության միջից պարզապես դուրս բերվեց: Մենք կարևորեցինք Դավթին՝ մոռանալով Փոքր Միերին: Մաթևոսյանի դիտարկմամբ՝ այդ պատճառով էլ մեր գրականությունից դուրս մնաց դրա փիլիսոփայությունը: Մեր էպոսը նաև գաղափարական ճնշումների ենթարկվեց: Այն հարմարեցվեց խորհրդային պահանջներին: Համահավաք տարբերակը գաղափարախոսությանը հարմարեցված գործ էր, որ հյուսվել էր մոտ 70 պատումների հիման վրա: Դրա ներքին նպատակը բռնակալ տերերից ազատագրվելու, արդարություն ու հավասարություն բերելու հրամայականին էր ուղղված: Այսինքն՝ սոցիալական խնդիրներն են կարևոր: Եվ այս տրամաբանությամբ էլ ավարտվում է էպոսը: Միերը դուրս է գալու, երբ ցորենը մասուրի, գարին էլ ընկույզի չափ կդառնա: Խոսքը առատության մասին է: Այսինքն՝ է՛լի խոսքը սոցիալական բնույթ ունի և շատ էլ լավ համապատասխանում է հեղափոխությունից բխող պահանջներին: Պատահական չէ, որ Ավ. Իսահակյանը Միերին դուրս բերեց Ագռավաքարից՝ նկատի ունենալով հեղափոխության արդյունքում ստեղծված արդար հասարակարգը: Կարելի է ասել, որ սա դարձավ էպոսի խորհրդային ժամանակների մեկնաբանության բարձրակետը, այն գաղափարական իմաստով շրջանակեց երկը: Չարենցի Փոքր Միերը ևս դուրս եկավ Ագռավաքարից և Օհանի չար զարմին բերեց «Անկում վերջնական և մահ անճառ»: Բայց, իհարկե, ոչ մեկն էլ չհավատաց Միերի՝ Ագռավաքարից դուրս գալու բարի ու հարկադրական լուրերին: Մինչև վերջ չասված խոսք կար, որ ծավալվում էր միայն կեցության ոլորտներում, մինչդեռ խոսքն ավելի հոգևոր, ժողովրդի դարավոր մտածողության, նրա բանականության սֆերաներում դարերի ընթացքում ձևավորված խնդիրների մասին էր: Փոքր Միերի տիեզերադավ կեցվածքը մարդկային գոյության, նյութական աշխարհի, տիեզերակագի հանդեպ անհնար էր խցկել միայն հացի, մարդկային բարեկեցության շրջանակների մեջ: Նա աշխարհն ավերում էր, կռվում էր Աստծո հրեշտակների դեմ, որպեսզի աշխարհում առատություն, արդարությու՞ն լիներ: Դրան ձգտել էին և նրա նախնիները: Միերը տարբերվում է նրանցից: Նա յոթ տարեկանում արդեն հաղթում է դյուցազուն հորը՝ Դավթին: Նա գնում է Ագռավաքար, որ է՝ տիեզերական չափումների սահմանը: Նրան միանգամայն նոր տիեզերակարգ է պետք, եղածից միանգամայն տարբեր, նա արդեն մի կողմ է դրել Թուր Կեծակին, նրան այլևս գրավում են մարդկային կեցության, նրա գոյության նոր՝ հոգևոր ուղիներ, նյութական տիեզերակարգին գալու է փոխարինելու հոգևոր կարգը, երբ մարդու մարմինը կհագնի հոգին, և մարդը կհայի

հոգու աչքերով: Սա արդեն որակապես նոր ժամանակ է, որ չէր կարող գրողի ուշադրությունից վրիպել: Եթե կուզեք՝ կերպարի բացահայտման այս շերտը նրա համար ավելի կարևոր է, քան առաջինը, որը կապվում է մեր ներկային: Հոգևոր որակները նաև ներկայի ու ապագայի համար են: Խեչոյանը բնականաբար ավելի էր կարևորելու Միերի՝ որպես հոգևոր աստվածություն լինելու հանգամանքը, որն ամբողջովին դուրս է մղված մեր էպոսի կենդանի մարմնից:

«Ժողովրդի դարերով կերտած մշակույթը իր մեջ ներառած՝ գնացել, հազար ինը հարյուր տարի, երկու հազար տարի փակվել էր Ագռավաքարի նախամայր արգանդում, նյութական աշխարհից ամենայն ազգային վաստակած ունեցվածքը տեղափոխել էր հոգևոր ոլորտ՝ փորձելով իր հետ պահպանության տարած ժառանգությունը քսան դար հետո ապագա սերունդներին վերադարձնելով՝ փրկել մեր ինքնությունը»/Լ. Խեչոյան, Միերի դռան գիրքը, Ե., 2004, էջ 16-17/:

Սա շատ կարևոր եզրահանգում է, որ գեղարվեստական իրացման կարիքն ունի: Խեչոյանը գտել է ձևը, նա ոչ միայն պատմող է, այլև դասախոսություն կարդացող, նա այդ ճանապարհով հերոսի հետ կապված գաղափարական, փիլիսոփայական մեկնություններ անելու հնարավորություն է ստանում: Իսկ այն հատվածներում, ուր պատմելու հնարավորություն է ստանում, պատմում է էպոսին արժանի պատկերներով ու զգացողությամբ:

Հազիվ թե կարելի է ցույց տալ մեկ այլ արժեքավոր որակ, ինչպիսին որ անհատի, այնպես էլ ժողովրդի ինքնությունն է, նրա անհատական նկարագիրը: Դա նշանակում է առանց դրսի օժանդակության կամ դրսի ներազդումների ինքնուրույն որոշումներ ընդունել և պատասխանատվություն կրել դրանց իրագործման համար: Այս իմաստով մեր ազգային վեպի Միերը տարբերվում է բոլոր մնացած հերոսներից: Խեչոյանի պատումի մեջ Միերն առանձնանում է ընդհանուրի ձևավորած համընդհանուր կարգից: Նա ընտրում է միանգամայն այլ ճանապարհ և ընդլայնում է դարերի ընթացքում ձևավորված մարդկային մտածողության սահմանները՝ հաղթահարելով այսկողմնայինի և անդրաշխարհայինի սահմանները:

Այս իմաստով Միերը դառնում է ոչ թե ազգային երևույթ, այլ համամարդկային: Անհատական անմահությունը և կյանքում կրած զրկանքների արդարացի փոխհատուցումը յուրաքանչյուր մարդու գերագույն նպատակն է ու ձգտումը: Եվրոպական մտածողությունը, իր մշակույթով հանդերձ, որոշակիորեն տեսանելի է դարձնում այդ ցանկությունների իրականցման նշագծերը՝ դրանցով սահմանափակելով մարդկային մղումների, կրքերի, հակումների սահմանները, թեև մարդկային բնական մղումները, պոռթկումն ամեն անգամ փորձում է

հաղթահարել դրանք: Այս պարագայում մշակույթը փորձում է որոշակի փոխզիջումային միջոցներ գտնել անհատական մղումների և ընդհանուրի միջև եղած խնդիրները հարթելու, դրանց համաժամանակյա գոյությունը ապահովելու համար: Մշակույթը՝ իր պատմությամբ, արվեստով, կենցաղավարման ձևերով և այլն, դառնում է մարդկային մղումները սանձահարող վճռական գործոն: Գերմանացին մինչև օրս ճանապարհների եզրերին պահում է այն աշտարակները, որտեղ այրել են մարդկանց: Դրանց ներկայությունը պարտադիր է՝ սխալները չկրկնելու, մարդկային մթին բնազդները սանձահարելու համար:

Մշակութային կեցությունը, որի դաշտում ապրում են ժողովուրդները, իրենց մեջ ներառում են ինչպես համընդհանուր սկզբունքներն ու իդեալները, այնպես էլ անհատական ձգտումները: Այնքան ժամանակ քանի դեռ դրանց միջև գտնվում են խելամիտ փոխզիջումներ, ամեն ինչ լավ է և մշակութային գաղափարներն իշխում են հասարակության վրա: Մարդն ընդունում է դրանց կարևորությունը համակեցական կյանքում: Իսկ երբ խախտվում է դրանց միջև գոյություն ունեցող կապերն ի հաշիվ մյուսի, բնականաբար տեղի է ունենում բախում հասարակության և անհատի միջև, որն անխուսափելիորեն մշակութային ճգնաժամի արդյունք է:

Խեչոյանի վեպը մեր ժողովրդի մշակութային համահավաք տեքստը նոր իրադրության մեջ քննելու հրամայականին է ուղղված: Ստեղծված կացության մեջ, որտեղ իշխանությունները նաև գնդակահարում են մարդկանց, իսկ սահմաններին թշնամին շարունակում է իր ոտնձգությունները, բնականաբար դժվար է խոսել համընդհանուր մշակութային դաշտում համակեցության մասին: Տեղի է ունենում գաղափարի աղավաղում և կամ էլ արհամարհանք, կամ հեգնանք այդ ամենի հանդեպ: Չարենցյան դասը մեկ անգամ ևս վկայելու է այդ ճշմարտությունը մեզ՝ հետնորդներիս: Մշակութային, դարերի խորքում ծնված և դարերի միջով անցած Վահագն այլևս անզոր է, քանի որ մարդիկ նրա գաղափարների, նրա ոգու կրողը չեն: Նրանք լքել են աստծուն, հետևապես մենք նրա ոգու կրողը չենք և արհավիրքների դեմ կանգնած ենք մերկ ձեռքերով: Աղավաղված, պատառոտված ձորձի նման ծվեն-ծվեն է արված մեր ոգին, մշակութային նկարագիրը, միակ փրկությունը Չարենցի և հայ ժողովրդի համար նոր գաղափարների հետևից գնալն էր: Դա ելք էր, որ հետո հանգեցնելու էր մեկ այլ փակուղու: Մինչդեռ այդ գաղափարները գայթակղիչ էին՝ զրկվածներն ունենալու էին իրենց բաժինը, անազատները ստանալու էին ազատություն, մարդիկ գնում էին նոր իդեալների հետևից և հավատում էին դրանց: Բայց նոր իդեալների կրողներից, գաղափարախոսներից շատերը կյանքով վճարեցին նորի ճանապարհին: Այնուամենայնիվ, դա նոր ժամանակի, նոր

գաղափարախոսության արդյունքում ընդհանուր մշակութային հարացույցները հստակորեն փոխելու, դրանցով առաջնորդվելու ժամանակ էր: Եվ դա, կարելի է ասել, կատարվեց բավականին կարճ ժամանակի ընթացքում, նոր հասարակարգի գաղափարական հիմքերը մշակված էին: Յոթանասուն տարի անց երկիրը կանգնեց ոչ թե փակուղու, այլ անդունդի եզրին: Այստեղ արդեն հետին թվով սխալները բացառելու և ամեն ինչ նորից սկսելու հարկադրանքը զուտ գաղափարական, մշակութային իմաստով դարձավ անորոշ, իսկ ճանապարհների հայտնագործումը՝ հրամայական պահանջ: Եվ քանի որ մշակութային նոր հարացույցների հայտնաբերում, մշակումն ուշացավ, խորացավ անորոշությունը, առաջացավ մշակութային ճգնաժամը:

Ամբողջ հարցն այն էր, որ այդ փլուզումն սկսվեց ներսից: Գաղափարախոսությունը պարտվեց, դրան հետևեցին մնացած բոլոր ոլորտները: Այդ ճգնաժամի արդյունքն էր, որ հասարակությունը հայտնվեց քաոսային վիճակում, մարդիկ սոցիալական, բարոյական թշվառության մեջ են, գողություն, սպանություններ, ընտանիքների քայքայում, կառավարության և ժողովրդի միջև բախումներ, սպանություններ, անբարոյական վարք ու գործունեություն վերին էշելոններում և այլն: Բայց սա գրողին քիչ է թվում. ճգնաժամը ոչ միայն տեղային, լոկալ բնույթ ունի, այլև համամարդկային: Խելագարության եզրին հասած մարդկությունը կարող է սեղմել միջուկային մարտագլխիկի կոճակը, և անբարոյականացած, ինքն իրեն մսխած, կենդանական բնազդներին ենթակա մարդը հարկադրված կսկսի նոր, մաքուր էջից, այլապես անհնարին է ճերմակ ձեռնոցներով, բայց արատավոր հոգով շարունակել ճանապարհը: Բայց այս ամենը հնարավոր է այն պահին, այն ժամանակ, քանի դեռ մարդը կշարունակի լինել անմշակույթ, սեփական անցած ճանապարհը գիտակցաբար, թե անգիտակցաբար մերժող: Խեչոյանը մարդկության քաոսային երթի մեջ փորձում է գտնել, ավելի ճիշտ՝ հայտնագործել մեր մշակույթի մոռացված էջը, որ ավելի շուտ գողացվել է սերունդներից կամ համապատասխանեցվել տերության գաղափարախոսությանը: Սրանով նա ցույց է տալիս, որ այնուամենայնիվ, գոյություն ունի այնպիսի գաղափար, այնպիսի իդեա, ինչը հնարավորություն կտա խառնակ աշխարհի քաոսային ընթացքի մեջ գնալ ճիշտ ճանապարհով, և դա ոչ թե դրսից, ուրիշներից մուրված գաղափար է, այլ սեփական երկարամյա կենսագրության խորքում բյուրեղացած գաղափար: Երբ ամբողջ աշխարհը միախառնել է ամեն ինչ, երբ լինել-չլինելու խնդիրն է ծառացած երկրագնդի բոլոր մեղավոր ու անմեղ բնակիչների առջև, միակ ելքը սեփական որակներին ապավինելն է, ինքն իրեն, իր մշակույթին վստահելն ու հավատալը:

Հրանտ Մաթևոսյանի հերոսը /«Կենդանին և մեռյալը»/ հիմնավոր պատասխան է տալիս եվրոպական հովերով տարված հերոսուհուն: «-Դու Նիցշե ուսումնասիրե՞լ ես: -Ես Թումանյան եմ ուսումնասիրել»/Հր.Մաթևոսյան, Երկեր, հտ 2, Ե.,1985, էջ 160/: Այսինքն՝ ես ինչու չպիտի հավատամ իմ հանճարին, բայց պիտի հավատամ ուրիշին՝ խելագարության սահմանին հասած հիվանադագին որակներով ծանրաբեռ անհատին: Մանավանդ որ նրանք տարբեր արժեհամակարգերի կրողներ են:

Խեչոյանը մոտենում է ոչ միայն մեզ բնորոշ որակներին, այլ ընդհանրապես Արևմուտքի և Արևելքի միջև եղած որոշակի տարբերությանը: Եվրոպական ինքնությունն ասոցացվում է առաջին հերթին բարձր սոցիալական ակտիվությանը, որտեղ կարևորվում են որոշակի, շոշափելի ձեռքբերումները կամ կարելի է ասել՝ «շարժման արդյունքը»: Նրանք գործնականությամբ լուծել են իրենց խնդիրները, որոշել են սահմանները, ամրագրել իրենց հզորությամբ, հիմա էլ բոլորին խաղաղության կոչեր են հղում, իսկ առանձին հակասություններն էլ մի հայացքով կարող են խաղաղության ծաղկանոցների վերածել, որի մասին գրում է Խեչոյանը:

Արևմտյան մտածողությանը, կենսաձևերի փիլիսոփայությանը հակադրվում է արևելյան փիլիսոփայությունը: Այս իմաստով մեր էպոսի վերջին ճյուղը ոչ թե ունի զուտ հայկական, ազգային, այլ համընդհանուր բնույթ, որ նախանշում է մարդկության գոյատևման հնարավոր ելքերից մեկը, թերևս ամենակարևոր ելքը: «Սասնա ծռերն» իր ներքին ուղղվածությամբ դառնում է արևելյան փիլիսոփայության բարձրակետերից մեկը: Այն դառնում է եվրոպական գործապաշտ փիլիսոփայությանը հակադիր ճանապարհ, որտեղ արտաքին հաշվարկելի ձևերը փոխարինվում են մարդկային ներաշխարհում կատարվող հեղաբեկումներով: Սա արդեն ոչ այնքան աշխարհագրական, որքան հոգևոր ոլորտ է, որտեղ էլ իրացվում է անհատի կայացման, նրա գործունեության հիմնական ընթացքը: Այստեղ մարդը հրաժարվում է նյութական գործունեությունից, հավաստելով, որ ստեղծագործական ակտիվությունը տեղի է ունենում հոգևոր ոլորտում և ոչ թե սոցիալական ոլորտում: Միերը մի կողմ է դնում նախնիների կողմից գործածված Թուր Կեծակին: Այս իմաստով մեր ազգային էպոսի Փոքր Միերը դառնում է Արևելքը ներկայացնող փիլիսոփայական խտացում՝ բարձրակետը, նրա համար մարդկությանն այլևս անհրաժեշտ են գոյակցության նոր ձևեր, որտեղ ուժը չի դառնալու հիմնական հերոսը: Սկսվելու է նոր ժամանակ, երբ մարմինները կհագնեն հոգիները, ներկային հակառակ հոգին դուրսը պիտի լինի, իսկ մարմինը՝ ներսը, հոգու աչքերը պետք է սկսեն տեսնել: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ հոգևոր կայացման, ինքն իր մեջ ներսուզվելու, իր

մեջ եղած մարդկային որակները զարգացնելու, դրանց ապավինելու պահանջ: Սա տիպիկ արևելյան մտածողության արտահայտություն է:

Խեչոյանը, իհարկե, այս երևույթին չի հաղորդել համընդհանուր բնույթ: Դրա համար նա ստեղծել է հոգեբանական անհրաժեշտ նախադրյալներ: Իր հերոսի անցած ճանապարհով ներկայացվում է միջավայրի կայացման, դրա առաջընթացի ուղին: Սասնա ամբողջ Մեծ տունը ավագանիով, մարդկանց հեղինակությամբ, աշխատելաձևով, բարքերով, երկիրը պահելու մաքառումներով կայացել և կայանում են համայնքային ընդհանուր ձևերի ոլորտում: Եվ ահա Սասնա տան մեծերի մաքառման շղթայում հայտնվում է մեկը, ով դեմ է գնում ընդունված կարգին՝ իրեն առանձնացնելով համայնքային կենսաձևերի տրամաբանությունից: Այս՝ հասարակական իմաստով ինքնասահմանափակումը սկիզբն էր Միերի՝ Ագռավաքար գնալու, աշխարհից առանձնանալու մտադրության: Դա բավականաչափ դժվարին ու ցավոտ ճանապարհ էր, քանի որ առանձնացումը միջավայրի կողմից ընդունվում էր կասկածանքով ու թշնամանքով: Մեծ Տան ավագներն այդ քայլի մեջ իրենց նետված բացահայտ մարտահրավեր տեսան, ավանդական միջոցներով երկիրը և իրենց սեփականությունը պահելու ձևերը փոխարինվում են նոր, մինչ այդ չտեսնված նորմերով, որոնք անմիջական սպառնալիք են նրանց՝ դարերով կուտակված հարստությանը: Հետևաբար Միերի մասին խոսակցությունները, որոնք տարածում էր Մեծ Տունը, կամ կապված էր նրա ֆիզիկական մահվան հիմնավորումներով՝ ապրել և մահացել է Ոստանակապանում որպես սովորական, ատամնաթափ ստրուկ, կամ էլ նրա մտավոր կարողությունների մասին արհամարհական խոսակցություններ տարածելով, ուր Միերը որևէ մեկի մոտ չէր կարող վստահություն ներշնչել: Նրան հարկ էր մոռանալ, իսկ եթե հիշում են, ապա պետք է հիշեն որպես անսովոր խելապակասի, որ ծնունդից ի վեր ափի մեջ պահած արյուն էր բերել՝ դրանով նախանշելով այն արհավիրքների մասին, որոնք իբրև թե գործվելու էին նրա կողմից: Իսկ իրականում այս ամենը լրացուցիչ ազդակներ էին Միերի համար այդ միջավայրը լքելու և նոր՝ ինքնության օվկիանոսը մտնելու հաստատակամ որոշման համար:

Այնուամենայնիվ, ինչո՞ւ է արևելյան մտածողությունն իր ընթացքը ուղղում դեպի մարդու ներաշխարհը՝ այն ավելի կարևորելով հասարակական կյանքում գոյություն ունեցող խնդիրներից: Եվ դա չի՞ նշանակում արդյոք, որ արևելքցին իր որակներով՝ որպես անհատականություն, դեռևս անհրաժեշտ մակարդակի չի հասել, որպեսզի իր վրա վերցնի պատասխանատվությունը և կատարի փոփոխություններ՝ հասարակական կյանքը կատարելագործելու համար: Առաջին հայացքից միայն այս դիտարկումը կարող է ճշմարիտ թվալ: Բայց իրողությունն այլ է:

Անհատի առարկայական-նյութական ակտիվությունը գործունեության լայն ասպարեզ կարող է ունենալ միայն անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում: Այդ պարագայում միայն հնարավոր է նկատելի հաջողությունների հասնել: Մինչդեռ հասարակությունները շատ հաճախ ապրում են տևական լճացման շրջանի մեջ, որից դուրս գալու ելքերը բավականին սահմանափակ են, մի դեպքում հնարավոր է համընդհանուր պայթյուն՝ բունտի ձևով, երբ այլևս անհնարին է նման կերպ ապրելը, և ուժերն էլ բավական են փոփոխությունների համար, և մյուս ուղին, որ ավելի հաճախ է տեղի ունենում, հեռացումն է հասարակական կյանքից, խնդիրներից: Երբ ելքերն այլևս տեսանելի չեն, մարդը հեռանում է հասարակական կյանքը վերափոխելու մտադրությունից, նա գնում է դեպի սեփական ներաշխարհը բացահայտելու, ինքն իրեն ավելի խորությամբ ճանաչելու ուղիով:

Հեռացումի քաղաքակիրթ ձևը Արևելքում արտահայտվեց վանականության միջոցով: Խոսքը աշխարհիկ կենցաղավարումը մերժած, կուսակրոն կյանքով ապրող կրոնական կամավոր ընկերակցության մասին է, որ Հայաստանում թափ առավ Ներսես Մեծի օրոք / 4-րդ դար/, իսկ այնուհետև աշխուժացավ 9-13-րդ, 14-15-րդ, 17-րդ դարերում: Կաթոլիկական վանականությունը մի քանի վանքեր միավորում էր մեկ միաբանության մեջ, իսկ Հայ եկեղեցում ամեն վանք կազմում էր ինքնուրույն միաբանություն /«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան/: Ճիշտ է՝ վանականությունը երբեք էլ ընդհանուր հասարակական տրամադրությունների, ինքնության դրսևորման ամբողջական ձևը չէր, դա, կարելի է ասել, ավելի ընտրյալների դասի կեցության ձևն էր, որ հակադրվում էր միջավայրի բարքերին ու տրամաբանությանը, բայց ակնհայտ է, որ այն մեր ինքնության արտահայտման ձևերից մեկն էր, որ կապվում էր մեր պատմությանը, նկարագրին, հոգեբանությանը: Եվ որքան էլ սահմանափակ թվով մարդկանց համար վանականությունը դառնար գլխավոր գործոն, միևնույն է՝ այն չէր կարող իր ընդհանուր ազդեցությունը չթողնել հասարակական գիտակցության վրա: Բնականաբար սա ձևավորելու էր ինքնության միանագամայն այլ արժեքներ, որոնք տարբերվում էին արևմտյան ինքնության որակներից: Բայց խեչոյանական բացահայտումները գնում են ավելի հեռուն: Ձեռքի տակ ունենալով հայագիտության նորանոր ձեռքբերումները՝ պատմական անցյալի և նորօրյա իրադարձությունների, ավելի հաճախ մարդկային հոգեբանության, բնավորության քննության ճանապարհով նա ցույց է տվել, որ ինքնության պահպանման այն ուղիները, որով անցել է վանականությունը, ժողովրդի գիտակցության մեջ կար հարյուրամյակներ առաջ: Այնպես որ վանականությունը մեկ անգամ ևս վկայում էր, որ ժողովրդի ինքնությունը պահելու հրամայականը ժամանակի մեջ

պատահական երևույթ չէր, և այն իր գոյությամբ փաստում էր արդեն եղածը, մանավանդ որ քրիստոնեությունն իրեն նախորդած մշակույթից վերցված աշխարհայացքային շատ գաղափարներ վերաիմաստավորում էր սեփական հայեցողությանը համապատասխան: Միերի՝ երկրորդ գալստյան, անարդար աշխարհի կործանումից և նոր՝ հոգևոր աշխարհի կայացումից հետո, երբ հոգու աչքերն սկսելու էին տեսնել, մեծագույն իրադարձությունը կապվեց Քրիստոսի երկրորդ գալստյան հետ: Նոր ժամանակներում եկեղեցին հնարավորինս մոռացության տվեց ազգային վեպի հիմնական դրույթները՝ դրանք համապատասխանեցնելով քրիստոնեության պահանջներին:

Ինչևիցե: Խեչոյանը իրականում կռահել է Փոքր Միերի՝ մեր ազգային էպոսի առաջադրած եզրահանգումը: Այն պահին, երբ աշխարհը այնքան է խառնակ, երբ ամեն ինչ միախառնվել է իրար, երբ անգամ ամենամոտ մարդը ասում է չէ, բայց հա է հասկանում կամ էլ հակառակը, էլ չենք խոսում մեծապետական փառքով ու մղումներով տոգորված տերություններին, երբ ավելի շատ դառնում ես նրանց կամքի ու ցանկությունների կատարողը, ուրեմն մնում է մի ելք՝ առանց որոտընդոստ գոռում-գոչյունների հնարավորինս պահպանես քո տեսակի անհատական որակները, հետևապես և անկախությունը: Միերը պահել է այդ որակները, բայց իհարկե, ոչ միայն մեզ համար, այլև մարդկության: Նա դառնում է տիեզերական որոշակի շրջափուլի ավարտը, երբ մարդկությունը մի կողմ պիտի դնի բարբորոս ուժը և տեսնի ու խոսի հոգու աչքերով ու լեզվով: Սա իրապես հումանիստական գաղափար է, և արժի, որ հայ գրականությունը գեղարվեստորեն իմաստավորի մեր «ամենաամեծ ստեղծագործությունը»:

Այսուհանդերձ, Փոքր Միերը առաջին հայացքից ոչ ամբողջական, հակասական կարող է թվալ, քանի որ չի ենթարկվում սովորաբար էպոսներում հանդես եկող հերոսների տրամաբանությանը: Սա տրամաբանությունից դուրս ուժ է, և դրանում է մեր էպոսի հմայքը: Սովորաբար էպոսները ցուցադրում կամ ներկայացնում են այս կամ այն հերոսի, նրա պատմության ավարտը: «Սասնա ծռերն» էլ Ջոջանց տան պատմության ավարտն է ազդարարում, այսքանով ամեն ինչ բնական ընթացքի մեջ է: Բայց պարզվում է, որ այդ վերջը նոր սկզբի նախապայմանն է, քանի որ ազգային ոգին, դարերով ձևավորված որակներն անմահ են: Միերը դուրս է գալու այն ժամանակ, երբ հասարակական կյանքում ստեղծված հարաբերությունները նրան գործելու հնարավորությունը կընձեռեն, և կսկսվի նոր ժամանակ: Գուցե կասեք, որ սա իներտ կեցվածք է, բայց սա Արևելքն է՝ իր հասարակական կյանքի դժվար վերափոխվող ընթացքով: Դրա համար էլ Արևելքն աշխարհին վարդապետություններ է տվել, որ հայեցողական տարակերպ ձևերով

իմաստավորում է իրեն ու աշխարհը, իսկ գործապաշտ Եվրոպան էլ աշխարհին հոգեվերլուծություն է տվել:

Մեր էպոսը դառնում է Արևելքի փիլիսոփայական իմաստավորումը: Չկա գործելու հնարավորություն, հերոսը գնում է խորքը ինքն իրեն ճանաչելու ճանապարհով. հոգևոր բնագավառում ժողովրդի ձեռքբերումներն ավելին են, քան սոցիալական կյանքում ձեռքբերումները: Հենց ,,Սասնա ծռերի,, առկայությունը դրա վկայությունն է: Այդ պատճառով էլ Եվրոպան գնահատել է մեր էպոսը, բայց մեծ վերապահումներով է խոսում հասարակական կյանքում գոյություն ունեցող բազմաթիվ խնդիրների մասին: Սա հարցի մի կողմն է և էական կողմը, որը հարկ է արձանագրել: Բայց սա վկայո՞ւմ է այն մասին, թե մենք հեռու ենք մնալու գլոբալացվող աշխարհի ընթացքից: «Հիմա Եվրոպայի գլոբալիզացվող մշակույթի հետ առնչվելո՞ւ ենք, թե՞ հիմնովին մերժելու ենք և այլն»,- հարցնում է Արամ Պաչյանը: Իհարկե, առնչվելու ենք: Բայց մենք Եվրոպային հետաքրքիր ենք մեր անհատական որակներով, այն ամենով, ինչը բնորոշ է մեր նկարագրին: Նրանք կարևորել են «Սասնա ծռերը» ոչ այն պատճառով, որ այնտեղ եղած մարդիկ ու գաղափարները իրենց են նման, այլ այն պատճառով, որ էպոսն առաջին հերթին մեր հոգու հայելին է: Հանկարծ ու Կարպիս Սուրենյանը Դոստոևսկուն հայացներ իր թարգմանություններում, դա պարզապես աղետ կլիներ: Մենք աշխարհի երթին մասնակիցն ենք դառնալու մեր մարդկային որակներով, միայն մեզ հատուկ հոգևոր ու նյութական արժեքների բեռով, որ հարստացնելու է մարդկության գանձարանը: Ուրիշ հարց, որ Խեչոյանն այս հարցին անդրադարձել է հպանցիկ կարգով. նա խոսել է առասպելական զորնդեղ գետակի մասին, որ սրընթաց իջնում և կտրում է լայնահուն գետը, ապա և շարունակում իր ճանապարհը Տիգրիսի հետ միասին: Խեչոյանը եվրոպական քաղաքակրթությանը միանալու կողմնակիցը չէ, նա համաշխարհային մշակույթի գանձարանը մեր սեփական նվաճումներով հարստացնելու կողմնակիցն է: Նկարիչը պնդում էր, «թե լեռնային գետակը, միախառնվելով համաշխարհային քաղաքակրթությունը խորհրդանշող Տիգրիսին, մեր տեսակի զորությունն էր ներդնում մարդկության առաջընթացին»/188/:

Աշխարհի ճոխ սեղանին մասնակից լինելու համար, հարկ է որ սեփական գործուն ներկայությունդ բերես այդ շքահանդեսին: Բայց այս ամենի հիմքում քո ինքնությունն է. հազարամյակների ճանապարհ անցած մարդկային քո տեսակը, որ խորքի մեջ իրականում չի փոխվում: Քանի որ մարդը միայն սոցիալական էակ չէ և կամ էլ միայն սիմվոլային կենդանի/Է. Ֆրոմմ/ չէ, որ մաքառում է մեդալների կամ մրցանակների համար, մարդը նախ և առաջ կենսաբանական էակ է /Մաթևոսյանն ասում է . «Մարդու մեջ կենդանին ավելի ուժեղ է, քան Աստված»/՝ իրեն հատուկ գենային

համակարգով, որ առաջացել է 4-5 հազարամյակ առաջ: Մեզ հայ է պահում ոչ միայն հայկական ազգային ոգին, այլ նաև մարդկային տեսակը՝ իր կենսաբանական յուրահատուկ որակներով, իր լավ ու վատ կողմերով: Մաթևոսյանի վրացի հերոսը՝ Էլդարը, դիմելով Արմիկ Մնացականյանին, ասում է՝ «ձերոնք պինդ են» /Հր. Մաթևոսյան, Երկեր երկու հատորով, հ. Երկրորդ, էջ 240/, Մեսրոպն էլ վկայում է. «Թե ուրեմն տղամարդ ենք եղել՝ որ թուրքը հազար տարի բկներիս նստած դիմացել ենք: - Պարծենալու բան է,- ասում էր,- պիտի պարծենանք»/Հր. Մաթևոսյան, Վիպակներ, Ե.,1990, էջ 194/: Խեչոյանը խոսում է «կորովավոր քրոմոսոմի» մասին: Խոսքը տեսակի դիմացկունության մասին է և ոչ ընտրյալ լինելու: Բայց դրա մասին արդեն խոսել է Մաթևոսյանը, նրանից առաջ՝ Մարտիրոս Սարյանը, իսկ վերջերս նաև եվրոպական գիտնականները՝ հազարավոր տարիների ընթացքում չի փոփոխվել հայ կանանց գենը: Բայց Խեչոյանի ասելիքը միայն դրա՝ դիմացկունության մասին չէ, այլ այս երկրագնդի վրա մարդու հավերժ ներկայության: Յուրաքանչյուրի մեջ նստած է նախաստեղծ հյուլեն՝ անժամանակը, որ փոխանցվում է սերնդից սերունդ: Սա ոչ ցանկության, ոչ էլ ինքնամեծարանքի առիթ է, մենք այդ գենի կրողն ենք: Դժվար է Խեչոյանին մեղադրել ազգայնական հակումների մեջ, ով համարձակվել է գրել «Սև գիրք, ծանր բզեզ» վեպը:

Բանալի բառեր՝ *բանահյուսություն, փիլիսոփայություն, ասք, ինքնություն, անմահություն, ելք, փիեզերք, մարդկություն, անհատ:*

THE PROBLEM OF IDENTITY IN LEVON KHECHOYAN'S “THE BOOK OF MHER'S DOOR” NOVEL

V. R. GRIGORYAN
Doctor of Philology, Professor
The Head of the Chair of Armenian Language and Literature

In this article the author presented Pokr Mher’s - the main hero’s individual characteristics. It is about qualities typical to the national identity. The central hero of the last branch of our national epic poem becomes the bearer of Oriental philosophy. He, as an individual, focuses more on the qualities of his own inner world than in the social life. He needs conditions for self-expression.

ПРОБЛЕМА ИДЕНТИЧНОСТИ В РОМАНЕ ЛЕВОНА ХЕЧОЯНА «КНИГА ДВЕРИ МГЕРА»

В. Р. ГРИГОРЯН
Доктор филологических наук, профессор,
Заведующий кафедрой армянского языка и литературы

В статье “Проблема идентичности в романе Левона Хечояна «Книга двери Мгера»” автор представил индивидуальные особенности главного героя -Малого Мгера. Речь идет о характерных национальной идентичности качествах.(Речь идет о национальных качествах). Главный герой последней ветви нашего национального эпоса становится носителем философии Востока. Он, как индивидуум, больше фокусируется на своем внутреннем мире, чем в общественной жизни.